ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔ

8 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2026 ԹՎԱԿԱՆ

7-ՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ 1-ԻՆ ՆԻՍՏ

ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԲԱՆԱՎՈՐ ՀԱՐՑԵՐԻ ՈՒ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԻ ՍՂԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Ժամը 15.00

Տիգրան Ավինյան

-Ավագանու հարգելի՝ անդամներ, հարց ու պատասխանի համար գրանցվել է ավագանու 10 անդամ՝

Արման Բաբաջանյան՝ «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցություն,

Ռոբերտ Ծովյան՝ «Ազգային առաջընթաց» խմբակցություն,

Հայկ Գրիգորյան՝ «Ազգային առաջընթաց» խմբակցություն,

Դիանա Քերոբյան՝ «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցություն,

Հայկ Միրզոյան՝ «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցություն,

Աշոտ Սարգսյան՝ «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցություն,

Մարատ Թոխյան՝ «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցություն,

Վահան Ավագյան՝ «Հանրային ձայն» խմբակցություն,

Արամ Թորոսյան՝ «Ազգային առաջընթաց» խմբակցություն,

Արմեն Գալջյան՝ «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցություն:

Տիգրան Ավինյան

-Առաջին հարցը՝ «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության անդամ Արման Բաբաջանյան, խնդրեմ:

Արման Բաբաջանյան

-Մի հարց եմ ուզում բարձրաձայնել, որպեսզի նաև մեր բնակիչները տեղեկանան: Երկար տարիներ տան վերանորոգման աշխատանքների կամ տան ներսում պատեր ձևափոխելու համար թույլտվություն կամ չի պահանջվել, կամ դրա համար տուգանք

նախատեսված չի եղել: Հետևապես, մարդիկ այժմ նախկինի նման անտեղյակ լինելով՝ տան վերանորոգման ժամանակ որոշակի աշխատանքներ իրականացնելու, տան ներսում պատուհան փոխելու կամ տան ներսում որոշակի վերանորոգում իրականացնելու ժամանակ տուգանվում են: Ցանկանում եմ բնակիչներին տեղեկացնել, որ նման աշխատանքներ իրականացնելու համար նախ և առաջ պետք է ստանալ համապատասխան շինթույլտվություններ, և խնդրում եմ պարզաբանել շինթույլտվություններ ստանալու կարգը և դրա համար ի՞նչ գործողություններ է անհրաժեշտ իրականացնել: Հնարավոր է արդյոք նման աշխատանքների համար, որոնք բնակիչների տան մասն են կազմում, որոշակի պարզեցված մեխանիզմ մտածել, որպեսզի դիմումներն ավելի պարզեցված ձևով ներկայացվեն և թույլտվությունները ստանան:

Տիգրան Ավինյան

-Միանշանակ համաձայն եմ, որ մենք ունենք բնակչության իրազեկվածության բարձրացման խնդիր: Այս մասով, քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության պետ Նարեկ Բարսեղյանը կներկայացնի, թե ինչպիսի աշխատանքներ առհասարակ կարիք չունեն ճարտարապետահատակագծային առաջադրանքի և շինթույլտվության, որ տեսակի աշխատանքները կարիք չունեն նույնիսկ էսքիզի, այսինքն՝ որ տեսակները պարտադիր պետք է ունենան էսքիզ, իսկ որ տեսակները պետք է ունենան շինթույլտվություն:

Նարեկ Բարսեղյան

-Ցանկանում եմ տեղեկացնել, որ ներկայացված հարցի վերաբերյալ ունենք էսքիզային նախագծի համաձայնեցման կետ՝ քաղաքաշինության ոլորտի թվային ծառայությունների հարթակով (Urban) 4.1 ձև, որը ո՛չ ճարտարապետահատակագծային առաջադրանք, ո՛չ շինթույլտվություն, չի պահանջում: Ձեր կողմից նշված՝ պատուհանների, տանիքի թիթեղի փոխարինման վերաբերյալ գոյություն ունի պարզեցված ընթացակարգ, որը մեր կողմից շատ է դիտարկվում և շատ կարճ ժամանակում համաձայնեցվում է: Սրա արդյունքում քաղաքացին հնարավորություն ունի այդ փաստաթուղթը ստանալուց հետո իր ցանկացած աշխատանքներն իրականացնի և հասցնի ավարտին: Այսինքն՝ Ձեր կողմից նկարագրված նախագծման թույլտվություն, շինթույլտվություն, հետագայում, նաև ավարտական ակտ նման աշխատանքների համար նախատեսված չեն:

Տիգրան Ավինյան

-Պարոն Բաբաջանյան, խոսքը վերաբերում է պատուհանի, տանիքի թիթեղների փոխարինում, արտաքին պատերի ներկում, այսինքն՝ կարող ենք ասել ոչ հիմնարար աշխատանքներ: Էսքիզը դա նույնպես ճարտարապետի կողմից ստեղծված փաստաթուղթ է: Այսինքն՝ որպեսզի էսքիզը համաձայնեցվի Երևանի քաղաքապետարանի կամ վարչական շրջանի հետ, ճարտարապետը պետք է այս նվազագույն աշխատանքը կատարի: Էսքիզը կցի դիմումին, ներկայացնի Երևանի քաղաքապետարան, ստանա համապատասխան թույլտվություն և իրականացնի իր աշխատանքները: Սա կարևոր է,

որովհետև Երևան քաղաքում, առանց ճարտարապետական միջամտության չեն կարողանալու իրականացնել ձևափոխություններ, այսինքն՝ այդ աշխատանքները նվազագույնը պահանջում են էսքիզային համաձայնեցում:

Հաջորդ հարցը՝ «Ազգային առաջընթաց» խմբակցության անդամ Ռոբերտ Ծովյան, խնդրեմ:

Ռոբերտ Ծովյան

-Պարոն Ավինյան, ցանկանում էի հասկանալ ի՞նչն է խնդիրը, որ Իսակով-Արշակունյաց ճանապարհահատվածի շինարարությունը, որը, ինչպես Դուք էիք նշել, պետք է մեկնարկեր մարտին, մեկնարկում է սեպտեմբերին:

Նույն հարցը վերաբերում է Շերամի փողոցին, որտեղ 250 մետր ճանապարհահատված է և ի՞նչն է խնդիրը, որ այդտեղ շինարարությունը տևում է կես տարի: Լավ էր, որ Կիևյան կամրջի աշխատանքները մինչև սեպտեմբերի 1-ն ավարտեցիք: Հետևապես, ես խնդրում և պահանջում եմ, որ հետևողական լինեք և բոլոր այդ շինարարական աշխատանքներն ավելի արագ ընթանան և հնարավորինս շուտ հանձնենք շահագործման:

Երկրորդ հարցս Երևան քաղաքում աղբի հոտի վերաբերյալ է՝ հատկապես ամռանը: Ես տեսնում եմ, որ «Երևանի աղբահանություն և սանիտարական մաքրում» համայնքային հիմնարկը տեսահոլովակներ է տեղադրում, որ պարբերաբար աղբահանության աշխատանքներ են իրականացնում, սակայն ցանկանում եմ տեղեկացնել, որ դա քիչ է: Ինչպես հասկանում եմ Երևան քաղաքը, բացի այդ փոքր «Կերխեր» (Kärcher) մեքենաներից, այլ փոքր նորմալ տեխնիկա չունի: «Կերխեր»-ով լվանում են միայն աղբամանները, բայց պետք է նաև լվանալ ասֆալտը, որովհետև աղբն այդ մեքենաներով տեղափոխելիս, ջուրը թափվում է ասֆալտի վրա և ամռանն ահավոր հոտ է գալիս:

Տիգրան Ավինյան

-Ձեր հարցին անդրադառնալով, նշեմ, որ Իսակով-Արշակունյաց ճանապարհահատվածի շինարարության շրջափուլն առհասարակ բավականին երկար տևեց, քանի որ մենք ունեինք մտահոգություններ՝ կապված հաղթող ընկերության հետ: Այդ մտահոգություններն ամփոփվել էր մեր հանձնաժողովի եզրակացության մեջ և ուղարկվել էր միջազգային գործընկերներին, ովքեր պնդեցին, որ ֆորմալ և միգուցե նաև ոչ ֆորմալ տեսանկյունից այդ ընկերությունը համապատասխանում է բոլոր չափորոշիչներին, որոնք ի սկզբանե ներդրված են եղել մրցութային փաթեթում: Այս պահի դրությամբ մենք ակնկալում ենք 18 ամսվա ընթացքում շինարարության սկիզբ և ավարտ: Այս փուլում իրականացվում է տեխնիկայի և մնացած տեսակի աշխատանքի հավաքագրում և մոբիլիզացիա, իսկ շինարարության մեկնարկը տրվելու է սեպտեմբերի սկզբին:

Պարոն Ծովյան, ես կիսում եմ Ձեր մտահոգությունը: Արդյոք կկարողանա այդ ընկերությունն իրականացնել աշխատանքները՝ ես վստահ չեմ և չեմ կարող վստահորեն պնդել: Այս մասով, սակայն, պետք է նշեմ, որ մեզանից կախված ամեն ինչ կանենք, որ այդ

ընկերությունն աշխատանքները կատարի կամ՝ համապատասխան տուգանքների և տույժերի ենթարկվի՝ այսքան ժամանակ մեզանից խլելու համար: Ցանկանում եմ նաև հավելել, որ եթե այնպես ստացվի, որ այս ընկերությունն իրապես չկարողանա իրականացնել, այն աշխատանքները, որոնք պետք է իրականացներ նախանշված մրցույթով, որը մենք տեսնելով բարձրաձայնել ենք մեր միջազգային գործընկերներին և իրենք չեն ընդունում, իրենց հետ լինելու է լուրջ քննարկում: Այս ծրագրից է կախված մեր հետագա հարաբերությունները և ես շատ հստակ այս մասին ուզում եմ նշել: Եվ ես հույս ունեմ, որ շինարարի և շինարարության հետ կապված հարցերը որևէ բացասական ազդեցություն չեն ունենա մեր միջազգային գործընկերների հետ հարաբերությունների վրա:

Ինչ վերաբերում է Շերամի փողոցին, այստեղ կոնստրուկցիան ուղղակի ճանապարհ չէ, այսինքն՝ դա որոշակի այդպիսի հենակետերով էստակադա է, ներքևում ունի անցուղիներ և 6 ամիս ժամանակ է նախանշված: Այս պահի դրությամբ մեծ տեմպերով աշխատանքներն են իրականացվում: Շատ շուտով նաև սկսելու ենք Նորագավիթի փողոցի էստակադայի շինարարությունը:

Այս մասով պարզաբանումներ կներկայացնի «Երևանի կառուցապատման և ներդրումային ծրագրերի իրականացման գրասենյակ» ՀՈԱԿ-ի տնօրեն Անետա Բաբայանը, խնդրեմ:

Անետա Բաբայան

-Նորագավիթի փողոցի էստակադայի շինարարության հաղթողի մասին նշելով, պետք է ասեմ, որ կապալի պայմանագիրը կնքվել է «ԲԻԼԴԵՐ ՔՈՆՍԹՐԱՔՇՆ», «ԷՆԵՐԳՈՍԻՍՏԵՄ» և «ՆԵՋԻԴԼ» ՍՊ ընկերությունների կոնսորցիումի հետ: Ցանկանում եմ նաև նշել, որ տեխնիկական հսկողության համար պայմանագիր է կնքվել «Սուֆետ» ՍՊ ընկերության հետ:

Տիգրան Ավինյան

-«Երևանի աղբահանություն և սանիտարական մաքրում» համայնքային հիմնարկի կողմից կատարված աշխատանքների վերաբերյալ պարզաբանումներ կներկայացնի քաղաքապետի խորհրդական Արման Անդրիասյանը:

Արման Անդրիասյան

-Պարոն քաղաքապետ, նշեմ որ աղբամանների լվացումը բոլոր վարչական շրջաններում կատարվում է շաբաթական 1 անգամ, իսկ Կենտրոն վարչական շրջանում կատարվում է 3 անգամ:

Տիգրան Ավինյան

-Հաջորդ հարցը՝ «Ազգային առաջընթաց» խմբակցության անդամ Հայկ Գրիգորյան, խնդրեմ:

Հայկ Գրիգորյան

-Առաջին հարցը հնչեցնեմ. ես կարծում եմ մենք օրենսդրական խնդիր ունենք՝ շինարարների կողմից կոմունիկացիոն ուղիները վնասելու դեպքում այդ վնասը

վերականգնելու ընթացքի ուղղությամբ, որովհետև թե՛ «Վեոլիա ջուր» և թե՛ «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ընկերությունները չեն հետևում, որպեսզի այդ վնասված ուղիներն արագ և որակով վերականգնվեն: Օրինակ՝ եթե շինարարը վնասում է խողովակ, նա մեծ չափի չի վերականգնում, այլ փոխում է փոքր հատված և որակային տարբերություն կա, երբ մեքենա է անցնում այդ հատվածով՝ կրկին վթար է լինում ու առաջանում է վեճ, թե ով է վթարի պատճառը: Դրա արդյունքում իրականում տուժում են բնակիչները և այստեղ կա օրենսդրական խնդիր:

Հաջորդ հարցը հետևյալն է. արդյոք քաղաքապետարանում քննարկվում է մանկապարտեզների ընտրության գործող կարգը վերանայելու հարցը, քանի որ հաճախ մանկապարտեզին մոտ բնակվող երեխաների հերթը չի հասնում այդ մանկապարտեզում ընդգրկվելու համար: Մարդիկ ճանապարհ են կտրում և գնում են այլ մանկապարտեզ, որը ստեղծում է խցանումներ:

Իմ առաջարկն է, որ մանկապարտեզ ընդունելիս որպես առաջնահերթություն հաշվի առնվի գրանցման վայրը և դա պարտադիր լինի, որպեսզի հոսքերը նվազեն:

Տիգրան Ավինյան

-Երկրորդ հարցի վերաբերյալ տեղեկացնեմ, որ այս խնդիրն առկա է ոչ այնքան մանկապարտեզներում, որքան դպրոցներում: Ծնողները հիմնականում ընտրում են կամ իրենց բնակության վայրի մանկապարտեզներ, կամ աշխատավայրի հարակից տարածքի մանկապարտեզ: Բայց բուն կարգին կարող ենք անդրադառնալ և վերանայել:

Այս խնդիրը շատ սուր է դպրոցների մասով և իրականում ես համաձայն եմ այն մոտեցման հետ, որ յուրաքանչյուր երեխա պետք է գնա այն դպրոց, որտեղ կամ բնակվում են, կամ ծնողներից մեկի աշխատավայրին է մոտ: Սա այն տրամաբանությունն է, որ բոլոր զարգացած քաղաքներն ունեն և դպրոցներում այդ երեխաներին պետք է տրվի առաջնահերթություն: Այս հարցը պետք է քննարկել ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության գործընկերների հետ:

Առաջին հարցի վերաբերյալ պարզաբանումներ կներկայացնի Երևանի քաղաքապետի խորհրդական Կամո Արեյանը:

Կամո Արեյան

-Շինարարության նախագծային փուլում ստուգվում է և բոլորը գիտեն թե ինչ կոմունիկացիաներ կան այդտեղ՝ ինչ խորությամբ և մակերեսայնությամբ, որպեսզի պարզ լինի ձեռքի աշխատանքով, թե մեխանիզացված կատարեն այդ աշխատանքը: Այդպիսի դեպք լինում է, երբ շինարարը նախագծում չի տեսել և անզգուշորեն վնասել է, կամ նախագծում տեսել է, բայց նորից անզգուշորեն վնասել է: Այս դեպքում կարգավորումը մեկն է՝ վնասող կազմակերպությունն ինքն է հատուցում վնասը: Եթե դա խիստ մասնագիտական աշխատանք է, բարձր հզորությամբ հաղորդալարի, էլեկտրահաղորդման լարի միացման խնդիր է, ինքը վնասը հատուցում է տիրոջը, տերը վերականգնում է:

Նույնն էլ «Վեոլիա ջուր» ընկերության պայմաններում է: Օրինակ՝ երկու օր առաջ «Մերիդիան» էքսպոկենտրոնի հարակից հիմնանորոգվող ճանապարհի եզրին շինարարն անզգուշորեն վնասել էր «Գլենդել Հիլզ» թաղամաս տանող ջրագիծը: «Վեոլիա ջուր» ընկերությունն իրականացրեց անջատումը, շինարարը՝ վերականգնեց:

Ժամկետի վերաբերյալ տեղեկացնեմ, որ եթե դա կենսաապահովման գիծ է, որևէ շինարար ուշացնելու իրավունք չունի:

Տիգրան Ավինյան

-Պարոն Արեյան, ժամկետների մասով ևս մեկ անգամ ուսումնասիրեք, եթե անհրաժեշտություն կա հավելյալ կարգավորումներ սահմանենք:

Հաջորդ հարցը՝ «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության անդամ Դիանա Քերոբյան, խնդրեմ:

Դիանա Քերոբյան

-Առաջին հարցն Արաբկիր վարչական շրջանի բնակիչների անունից է: Մենք ազատագրում ենք բակային տարածքները և կառուցում ենք մանկական խաղահրապարակներ, ֆուտբոլի դաշտեր, բայց չեն ազատագրվում մայթերը:

Հր. Քոչարի և Վաղարշյան փողոցների խաչմերուկում՝ մայթեզրից 1մ հեռավորության վրա, կա կառույց, որը խանգարում է հետիոտնի անցումներին և մանկասայլակով անցորդներին: Այս մասին բազաթիվ անգամ դիմել են, նույնիսկ «Ակտիվ քաղաքացի» հավելվածով են գրել բնակիչները: Պատասխանն այնքան էլ համոզիչ չէ՝ 2009թ. լրացել է վարձակալության պայմանագրի ժամկետը, իսկ շինությունն ապօրինի է, թե օրինական պարզ չէ:

Խնդրում եմ տեղեկացնել շինությունն օրինական է, թե ոչ և եթե ոչ, ապա ձեռնարկել միջոցներ այն քանդելու համար:

Երկրորդ հարցը վերաբերում է Մերգելյան այգու խնամքին և սանիտարական մաքրմանը: Դժգոհություն կա այն մասին, որ երեխաների հետ զբոսնելիս հաճախ հանդիպում են լեցուն աղբարկղերի, աղբահանությունը ուշ-ուշ է կատարվում, ինչպես նաև առկա է ոռոգման խնդիր՝ նորմալ չի կատարվում:

Ես այնտեղ եղել եմ քաղաքապետարանի կողմից կազմակերպված վերջին բացօթյա համերգին, այդ օրը շատ էին ջրել և ամբողջ կանաչապատ գոտին ջրի մեջ էր:

Խնդրում եմ համագործակցել վարձակալի հետ և այս ուղղությամբ ձեռնարկել միջոցներ:

Տիգրան Ավինյան

-Հարցին կպատասխանի Արաբկիր վարչական շրջանի ղեկավար Սուրեն Վարոսյանը:

Սուրեն Վարոսյան

-Հր.Քոչարի և Վաղարշյան փողոցների խաչմերուկում գտնվող կրպակի ապամոնտաժման ուղղությամբ գործողություն էինք սկսել դեռևս օգոստոս ամսին, ծանուցել էինք սեփականատիրոջը, որ կրպակն ապամոնտաժվելու է, սակայն սեփականատերը

օգոստոս ամսվա վերջին ներկայացրեց դատարանի կասեցման որոշումը: Այժմ այդ գործընթացներն ընթացքի մեջ են:

Կիսում եմ Ձեր տեսակետը, որ կրպակի տեղադիրքը հարմար չէ, խանգարում է հետիոտնային անցմանը, սակայն այս պահի դրությամբ իրավական տեսանկյունից գործողություն ծավալել չենք կարող:

Տիգրան Ավինյան

-Դատարանի որոշման մասով պարզաբանումներ կներկայացնի քաղաքապետարանի աշխատակազմի վերահսկողության վարչության պետ Տարոն Մարգարյանը:

Տարոն Մարգարյան

-«Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» նոր փոփոխված օրենքով սահմանվել է ժամկետ, որ դատարանի կողմից հարկադիր կատարումն ապահովող ծառայությունը պետք է տեղեկացվի և հայցի ապահովումները պետք է վերացվեն: Այդ գործընթացները մոտ օրերս տեղի ունենալուց հետո, ցանկերը քաղաքապետարանի աշխատակազմի իրավաբանական վարչության կողմից կտրամադրվեն համապատասխան ստորաբաժանումներին և ստորաբաժանումները ձեռնամուխ կլինեն շինությունների քանդմանը:

Տիգրան Ավինյան

-Երկրորդ հարցին ևս կպատասխանի Արաբկիր վարչական շրջանի ղեկավար Սուրեն Վարոսյանը:

Սուրեն Վարոսյան

-Դու ճիշտ եք, Մերգելյան այգու կանաչապատ տարածքի խնամքով զբաղվում է վարձակալը: Նշված համերգից հետո, մենք զգուշացրել ենք վարձակալին, որ պայմանները բավարար չեն և՛ աղբահանության, և՛ խնամքի մասով: Առաջարկել ենք լուծումներ և սպասում ենք արձագանքին:

Տիգրան Ավինյան

-Հաջորդ հարցը՝ «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության անդամ Հայկ Միրզոյան, խնդրեմ:

Հայկ Միրզոյան

-Առաջին հարցը վերաբերում է Երևանի քաղաքապետարանի ենթակայությունից դուրս գտնվող կառույցների հետ իրավահարաբերությունների կարգավորմանը: Օրինակ՝ երբեմն որոշ փողոցներում «Վեոլիա ջուր» ընկերությունը կամ այլ կառույց քանդում է և ճանապարհի այդ հատվածը բավականին երկար ժամանակ մնում է քանդված, կամ մասնավոր սեկտորի կողմից երբեմն նկատվում են որոշակի քանդումներ:

Ուզում եմ հասկանալ ի՞նչ իրավահարաբերություններ ունենք և ինչպիսի՞ գործիքակազմ է կիրառվում Երևանի քաղաքապետարանի կողմից, հատկապես այդ շինարարական աշխատանքների ժամկետների մասով, որովհետև դրանք երբեմն

անհարկի ձգձգվում են, էլ ավելի են մեծացնում խցանումները և տվյալ տարածքի բնակիչների ձայրույթն են հարուցում:

Երկրորդ հարցը վերաբերում է փողոցների ցուցանակներին: Վերջին շրջանում բավականին մեծ թվով փողոցներ անվանակոչվեցին և վերջերս ես գտնվում էի Սիլիկյան թաղամասում, որտեղ առկա 13 փողոցն էլ անվանակոչված են և այլևս համարակալված փողոց չկա: Գործընթացն ամբողջացնելու համար կարելի է ձեռնամուխ լինել փողոցների ցուցանակները տեղադրելուն, որովհետև բնակիչներն այս հարցը բազմիցս բարձրացրել են:

Խնդրում եմ տեղեկացնել, թե երբ կլուծվի այս հարցը:

Տիգրան Ավինյան

-Երկրորդ հարցի վերաբերյալ արձանագրենք որպես գործակարգավարական խորհրդակցության հանձնարարական քաղաքապետարանի աշխատակազմի առևտրի, ծառայությունների և գովազդի վարչությանը, որպեսզի Երևանի ավագանու կողմից նոր փողոցների անվանակոչության որոշումներն ընդունվելուց անմիջապես հետո ձեռնարկվեն միջոցներ համապատասխան ցուցանակների տեղադրման ուղղությամբ:

Առաջին հարցի վերաբերյալ՝ կարևոր մի բան պետք է ևս մեկ անգամ արձանագրենք, որ ոչ բոլոր դեպքերում է այդ աշխատանքների պատվիրատուն Երևանի քաղաքապետարանը: Օրինակ՝ Պարոնյան-Պռոշյան փողոցներում իրականացվող մեծածավալ աշխատանքները, որոնք շատ երկար ձգվեցին՝ պետք է ապրիլին ավարտվեին, այս աշխատանքների պատվիրատուն քաղաքապետարանը չէր, բայց գործընթացների և կազմակերպական խնդիրների արձանագրողն էր և այդտեղ ունենք բազմաթիվ արձանագրություններ:

Ես կարծում եմ մենք պետք է շրջայց կատարենք, վերհանենք բոլոր պայմանագրերը և ձեռնարկենք միջոցներ ժամկետները և մեթոդները վերանայելու ուղղությամբ:

Հաջորդ հարցը՝ «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության անդամ Աշոտ Սարգսյան, խնդրեմ:

Աշոտ Սարգսյան

-Հարցս վերաբերում է Երևանի քաղաքապետարանի կողմից փոխարինվող վերելակներին: Այս ժամանակահատվածում փոխարինվեց Երևան քաղաքի շենքերի կեսից ավելիի վերելակները: Եվ իրականում սա շատ լավ գործընթաց է, որի անհրաժեշտությունը կա, բայց սրան զուգահեռ մի խնդիր էլ կա, որի հետ քաղաքացիները հաճախ բախվում են: Խոսքը վերաբերում է վերելակների վատ սպասարկմանը: Օրինակ, երբ վերելակը կարող է որոշ ժամանակ չաշխատել, կա բարդ կոմունիկացիա համատիրությունների հետ, որը կարող է տևել մի քանի օր ինչն էլ անհարմարություն է պատճառում բարձրահարկ շենքերում ապրող մարդկանց:

Ես կցանկանայի հասկանալ արդյոք մենք կարող ենք ինչ-որ մեխանիզմ ներդնել, որ վերելակների սպասարկումն ավելի օպերատիվ իրականացվի, որովհետև, իրականում,

վերելակների փոխարինման մեր լավ գործընթացը, սպասարկման ֆոնի վրա մի փոքր այլ կերպ են սկսում դիտարկել:

Տիգրան Ավինյան

-Պարոն Սարգսյան, այս մասով ցանկանում եմ նշել, որ ինչ-որ մի կետում պետք է Երևանի քաղաքապետարանի լիազորությունների վերազանցման սահմանը գծենք: Եթե այդ աշխատանքներն էլ Երևանի քաղաքապետարանի կողմից են իրականացվելու, ապա ի՞նչ գործառույթ է մնում համատիրություններին: Այսինքն՝ ստացվում է, որ մենք փաստացի վերցրել ենք մեզ վրա համատիրության գործառույթը և ամբողջ քաղաքում իրականացնում ենք այդ կապիտալ ներդրումը:

Այս տարվա վերջին ամբողջ քաղաքում կունենանք փոխարինված 3060-3070 հատ վերելակ և կմնա չփոխարինված ընդամենը 1300 վերելակ: Այսինքն մենք կատարել ենք հսկայական ծավալի աշխատանք: Սպասարկումն է՞լ մենք իրականացնենք:

Պարոն Անդրիասյան, բոլոր այն տեղերում, որտեղ համատիրությունների հետ կապված նմանատիպ խնդիրներ կլինեն, համատիրության ղեկավարի փոփոխություն նախաձեռնենք, նշանակենք կոմպետենտ մարդ, մենք էլ իրեն աջակցենք թող այս տեսակի հարցերը լուծի և այս դահլիճում նման հարցեր չբարձրաձայնվեն: Այս ուղղությամբ մինչև 2027թ. մայիս ամիսը ձեռնարկեք միջոցներ:

Հաջորդ հարցը՝ «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության անդամ Մարատ Թոխյան, խնդրեմ:

Մարատ Թոխյան

-Մենք տեսնում ենք ինքնակամ կառույցների ապամոնտաժման աշխատանքները, որը շատ լավ է, բայց շատ քիչ տեղեկատվություն կա վարձակալած կամ սեփականաշնորհած տարածքների մասին, որոնց վրա ոչ մի շինություն չկա: Այդպիսի տարածքներ շատ կան այգիներում ու նաև մայթերին կից: Այդ հատվածները, որոնք Երևանի կանաչապատման տարածքի մեջ չի, մեր ընդդիմադիր գործընկերները նկարահանում են և ներկայացնում որպես չորացած տարածք:

Կարծում եմ այս մասով Ձեր կողմից պետք է հրահանգ լինի վարչական շրջանների ղեկավարներին, պարտադրելու այդ տարածքների վարձակալներին բարեկարգելու այդ հատվածները:

Երկրորդ հարցը «Ակտիվ քաղաքացի» հավելվածի մասին է: Միանշանակ դա շատ արդյունավետ հարթակ է, հարյուրավոր պաշտոնատար անձինք այդ հարթակում գրանցված են և անմիջական կապ ունեն բնակիչների հետ:

Ինքս էլ գրանցված եմ այդ հարթակում և նկատել եմ, որ քաղաքապետարանի՝ հարթակի աշխատանքներով զբաղվող բաժինը, չունի կանոնակարգ կամ պատասխանելու չափորոշիչներ: Շատ դեպքեր են լինում, երբ հարցադրումը ստանում ենք ու չկա ո՛չ հասցե, ո՛չ հեռախոսահամար, այլ միայն գտնվելու վայր է նշվում ու աշխատակիցները օրերով չեն կարողանում այդ հասցեն գտնել: Սահմանված ժամկետն անցնում է և եղել է դեպք, երբ

աշխատակիցը վերադասից ստացել է խիստ նկատողություն: Կցանկանամ պարզաբանում ստանալ այս մասով:

Տիգրան Ավինյան

-Իրականում «Ակտիվ քաղաքացի» հարթակում ի սկզբանե ներդրված է հայտ ներկայացնող անձի գաղտնիության պահապանման կանոնակարգ, բայց Ձեր մատնանշած դեպքերում, երբ կոնկրետ ինչ-որ հատվածում խնդիր կա, այդտեղ հնարավորություն է տրվում, քաղաքացու ցանկության դեպքում, իր անձի մասին հայտնել և տրամադրել հեռախոսահամար: Այդ մասով, կարծում եմ, մենք մեր ընթացիկ ներքին կանոնակարգերը ևս մեկ անգամ կուսումնասիրենք:

Ուշացումների վերաբերյալ արդարացումներ միշտ կարող են լինել, բայց ես կարծում եմ, որ առհասարակ «Ակտիվ քաղաքացի» հարթակում ուշացումներ չպետք է լինեն և, եթե կան տեխնիկական հարցեր, դրանք կքննարկենք և կգտնենք լուծումներ, բայց եթե անձը չի ուզում իր անձը հրապարակվի, ապա չի հրապարակվելու:

Ինչ վերաբերում է «Հողային օրենսգրքի» 60-րդ հոդվածով սահմանված հողերին՝ վարձակալությամբ տրամադրված կանաչ տարածքներին, տեղեկացնեմ, որ «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» նոր փոփոխված օրենքով մենք ունենք հնարավորություն չեղարկելու այդ պայմանագրերը: Այս մասով պարզաբանումներ կներկայացնի քաղաքապետարանի աշխատակազմի իրավաբանական վարչության պետ Արմինե Ստեփանյանը:

Արմինե Ստեփանյան

-Համայնքային և պետական սեփականություն հանդիսացող՝ «Հողային օրենսգրքի» 60-րդ հոդվածով սահմանված սահմանափակումներով հողամասերի մասին՝ նշեմ, որոնք ծանրաբեռնված են շինություններով՝ «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» օրենքում կատարվել է փոփոխություն, որով եթե պայմանագրերը որոշակի ժամկետով են կամ անորոշ են և դրանց ժամկետներն ավարտված են, արդեն համայնքն իրավասու է միակողմանի լուծել պայմանագրի այն մասը, որը ծանրաբեռնված չի շինությամբ: Այսինքն՝ մնում է միայն շինության տակի զբաղեցրած հողամասը: Բացի դա, նաև կա կարգավորում այն առումով, որ եթե նախկին Քաղաքացիական օրենսգիրքը նախատեսում էր, որ գույքի սեփականատերն իրավունք ունի օգտագործելու հողամասի այն մասը, որում ամրակայված է այդ գույքը, ապա այդ մասով կարգավորումները փոխվել են և այն դեպքում, երբ հողի վարձակալության պայմանագրի ժամկետը սպառվում է, օրենքով նախատեսված է, որ այդ գույքը փոխանցվում է հողի սեփականատիրոջը: Այս դեպքում նախատեսել ենք կարգավորում՝ դատական կարգով փոխհատուցումը շուկայական արժեքով վճարելու և այդ պայմանագրերը դադարեցնելու մասին:

Տիգրան Ավինյան

-Երկրորդ հարցի վերաբերյալ պարզաբանումներ կներկայացնի Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարության պետ Լիլիթ Յավրյանը:

Լիլիթ Յավրյան

-Ինչպես Դուք նշեցիք, պարոն քաղաքապետ, «Ակտիվ քաղաքացի» հարթակում քաղաքացիների՝ հայտատուների անոնիմությունը միանշանակ պահպանվում է, բայց այն դեպքերում, երբ կատարողների համար խնդիր է ստեղծվում տեղորոշումը ճիշտ գտնելու համար, մենք քաղաքացուց խնդրում ենք թույլտվություն հեռախոսահամարը փոխանցելու համար և որևէ դեպք, որևէ խնդիր մինչ օրս չի եղել:

Ինչ վերաբերում է աշխատանքային խմբի հետ կոմունիկացիա ունենալուն, ապա նշեմ, որ այդ գործառույթն իրականացվում է քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարության զանգերի աջակցման և սպասարկման բաժնի կողմից, որի հետ բոլոր ստորաբաժանումներն ակտիվ համագործակցում են և որևէ կոմունիկացիայի խնդիր չկա:

Տիգրան Ավինյան

-Հաջորդ հարցը՝ «Հանրային ձայն» խմբակցության ղեկավար Վահան Ավագյան, խնդրեմ:

Վահան Ավագյան

-Առաջին հարցս վերաբերում է Բուսաբանական այգու անավարտ շինարարական աշխատանքներին, որոնք պետք է ավարտված լինեին սեպտեմբեր ամսին: Պետք է նշեմ նաև պարիսպների ոչ պատշաճ տեսքի մասին: Կարող եք շրջայց կազմակերպել և կտեսնեք, որ բավական թերի վիճակ է տիրում, իսկ շուտով COP 17-ն է, սակայն նախապատրաստական աշխատանքները հավուր պատշաճի չեն կատարվում:

Հաջորդ հարցս վերաբերում է տարբեր վարչական շրջաններում գտնվող շինությունների պատշգամբների փլուզումներին, մասնավորապես՝ Շենգավիթ վարչական շրջանի դեպքի հետ կապված: Առաջարկում եմ ստեղծել որևէ պարզ համակարգ, որպեսզի քաղաքացիները կարողանան դիմեն և ստանան պարզեցված լուծում:

Տիգրան Ավինյան

-Պատշգամբների խնդրի հետ կապված արդեն ունենք պարզեցված ընթացակարգ, որը կոչվում է էսքիզ, ինչն էլ նկարագրեց քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության պետ Նարեկ Բարսեղյանը: COP 17-ի և Բուսաբանական այգում տարվող աշխատանքների հետ կապված ունենք մեծ մտահոգություն: Կապալառուն՝ բացի այն, որ չի հասցնում ավարտել աշխատանքները, այլև աշխատանքները չի կատարում պատշաճ որակով, և այստեղ մենք կապալառուի հետ կապված խնդիր ունենք: Այդպիսի խնդիր առկա է նաև Հրազդանի կիրճում, և որքան տեղյակ եմ կապալառուի հետ պայմանագիրը լուծել ենք: Այն պահից, երբ մենք սկսեցինք պահանջել, կապալառուն սկսեց ցուցադրական գործողություններ կատարել: Այնուամենայնիվ, այս տեսակ մոտեցմամբ բոլոր կապալառուները պետք է տեղեկանան, որ պատժվելու են օրենքի ողջ խստությամբ, և նմանատիպ կապալառուները Երևան քաղաքում, առհասարակ, ոչ-մի գործունեություն չեն կարող ծավալել:

Այս մասով պարզաբանումներ կներկայացնի նաև Արաբկիր վարչական շրջանի ղեկավար Սուրեն Վարոսյանը:

Սուրեն Վարոսյան

-Այո, պարոն քաղաքապետ, քանի որ կապալառուն աշխատանքները չէր իրականացնում անհրաժեշտ արագությամբ, մենք 2 անգամ գրավոր ծանուցել ենք կապալառուին, որ հավուր պատշաճի աշխատանքներ չի իրականցնում, որից հետո տեխ. հսկողին գրավոր դիմեցինք, ունեցանք նաև իր կարծիքը, որը համահունչ է մեր կարծիքին: Պայմանագրի ժամկետը լրացավ, մենք պայմանագիրը միակողմանի լուծեցինք և ներկա պահին դատական գործընթացքի մեջ ենք կապալառուի հետ: Որպես այդպիսին կասեցման որոշում չկա, քանի որ ունենք օրինական կահավորված շինհրապարակ, սակայն մեր միակողմանի լուծումը, ինչպես նաև գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող անձանց ցանկում ներառվելը բողոքարկվում է դատական կարգով, այդ իսկ պատճառով այժմ մեզ անհրաժեշտ են լրացուցիչ ուսումնասիրություններ, որ իրավականորեն այդ խնդիրը լուծենք:

Տիգրան Ավինյան

-Պարոն Վարոսյան, Ձեր խնդիրն է՝ համագործակցել քաղաքապետարանի աշխատակազմի իրավաբանական վարչության պետի հետ, հրատապ գտնել նորմալ կապալառու և աշխատանքը հանձնել իրեն:

Հաջորդ հարցը՝ « Ազգային առաջընթաց» խմբակցության ղեկավար Արամ Թորոսյան, խնդրեմ:

Արամ Թորոսյան

-Առաջին հարցս վերաբերվում է Աղի լճի արդիականացմանը: Էլ ավելի է մեծանում Աղի լիճ գնալու պահանջարկը՝ թե՛ Երևանի բնակիչների, թե՛ ՀՀ քաղաքացիների, թե՛ օտարերկրացիների կողմից: Գիտեմ, որ գոյություն ունի տեխ. հսկման, աշխատանքների կատարման մրցույթ, սակայն բուն նախագիծն այդպես էլ չհրապարակվեց: Խնդրում եմ տեղեկատվություն տրամադրել այս հարցի շուրջ:

Երկրորդ հարցս վերաբերում է Էրեբունի վարչական շրջանի Արին-Բերդ փողոցի վերանորոգմանը, արդյոք հնարավոր է վերանորոգումն ավարտել արագացված տեմպով, քանի որ մեծ գումարներ են ծախսվում, իսկ աշխատանքները չափազանց դանդաղ են ընթանում: Այդ տարածքը գտնվում է վատթար և բարդ վիճակում:

Տիգրան Ավինյան

-Եկեք մի կարևոր տարբերակում անենք, որ Արին-Բերդի ճանապարհն ուղղակի ճանապարհ չէ: Այնտեղ կան կամրջային հատվածներ, որոնք պահանջում են իրենց մոտեցումները:

Հարցերի վերաբերյալ պարզաբանումներ կներկայացնի նաև քաղաքապետարանի աշխատակազմի շինարարության և բարեկարգման վարչության պետ Անդրանիկ Թևոսյանը:

Անդրանիկ Թևոսյան

-Աղի լճի շինարարության մրցույթը կայացել է, հաջորդիվ պետք է կայանա տեխ. հսկման մրցույթը, և կտրվի աշխատանքների մեկնարկը:

Արին-Բերդի ճանապարհին ունենք 2 կամրջային կառուցվածք և երկաթուղու գիծ: Այն բավականին բարդ և ծավալուն հիմնանորոգման նախագիծ է, առկա են կոմունիկացիայի խնդիրներ, սակայն աշխատանքները սկսված օրվանից չեն դադարել:

Տիգրան Ավինյան

- Պարոն Թորոսյան, քանի որ սա հիմնանորոգում է, և մենք այստեղ անրադառնում ենք ոչ միայն գրունտային շերտին, այլև բոլոր կոմունիկացիաներին՝ աշխատանքի ժամանակատար լինելը կապված է այդ ամենի հետ:

Պարոն Թևոսյան, երկուշաբթի օրը՝ գործակարգավարական խորհրդակցության ժամանակ, կներկայացնեք Աղի լճի բարեկարգման աշխատանքների մասին տեղեկատվություն:

Հաջորդ հարցը՝ «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության ղեկավար Արմեն Գալջյան, խնդրեմ:

Արմեն Գալջյան

-Մենք բազմաթիվ մայթերում ունենք քայլելու համար ոչ բավարար տարածքներ և ես նկատում եմ, որ որոշ տեղերում վերակառուցում է իրականացվում, բայց վերականգնում են կամ նոր են ստեղծում մայթի այն հատվածը, որտեղ խոտածածկ է՝ ծառերի արանքներում: Եվ շատ հաճախ դրանք պատշաճ չեն պահպանվում և վերածվում է հողի ու աղբի, այդ թվում նաև Կենտրոն վարչական շրջանում և մյուս վարչական շրջաններում:

Այս մասով ես ցանկանում էի իմանալ արդյոք պատրաստվում ենք փոխել մեր քաղաքականությունը և այլևս խոտածածկ տարածքներ որոշ դեպքերում չունենաք՝ սալիկապատենք կամ այլ ձևով քայլելու ավելի հարմար դարձնենք այդ մայթերը:

Ամբողջ աշխարհում մենք տեսնում ենք, որ այդ մոտեցումով են առաջնորդվում և ավելի շատ քայլելու համար են հատկացնում մայթը, քանի որ խոտն այդքան էլ չի ազդում բնապահպանական հարցերի վրա, ինչպես ծառը: Այսինքն՝ կլինի ծառ իր բնաբաժակով և քայլելու համար հատված:

Տիգրան Ավինյան

-Պարոն Գալջյան, Դուք ներկա պահին բացահայտեցիք գործադիր մարմնի ամենաթեժ բանավեճերից մեկը և մեր ներքին քննարկումներում ունենք 2 մոտեցման կողմնակիցներ և աջակիցներ: Օրինակ՝ քաղաքապետարանի աշխատակազմի բնապահպանության վարչությունը կտրականապես դեմ է Ձեր մոտեցմանը, բայց նաև ունենք հակառակ տեսակետը:

Ուղղակի հիմա հետևյալ խնդիրը պետք է դնենք ես կարծում եմ. բոլոր այն տեղերում, որտեղ գալիք 2 տարիների ընթացքում մենք ունենք հնարավորություն թեկուզ թփերով հարստացնել այդ հողակտորները, դրանք պետք է շարունակեն մնալ այդպիսին և

ունենանք հստակ ծրագիր, որ այդ տարածքները կանաչապատվում են: Որտեղ հնարավոր չլինի, այդտեղ վարչական շրջանների ղեկավարների մոտեցումը գերակա կլինի այսուհետ:

Հարցի վերաբերյալ պարզաբանումներ կներկայացնի նաև քաղաքապետարանի աշխատակազմի բնապահպանության վարչության պետ Սիրարփի Հայկազյանը:

Սիրարփի Հայկազյան

-Պարոն Գալջյան, զուտ բնապահպանական տեսանկյունից, եթե հաշվի ենք առնում ջրանցիկ և անջրանցիկ մակերեսներ, կլիմայի փոփոխության ազդեցությամբ ավելի խտացված տեղումների քանակ՝ այդ կանաչ հատվածը կամ հողային հատվածը նաև ջրի կլանման լրացուցիչ կարողություն է ապահովում: Եթե մենք ամբողջությամբ տոմետապատենք, էլ չեմ խոսում ջերմային կղզիների մասին, որ տոմետը շատ ավելի շատ է տաքանում քան հողային մակերեսը, դրա համար բնապահպանության վարչությունն, այո, այսքան ժամանակ դեմ է եղել այս մոտեցմանը:

Տիգրան Ավինյան

-Պարոն Գալջյան, մենք այս հարցը կքննարկենք և կտեղեկացնենք Ձեզ:

Ավարտվեց հարց ու պատասխանը:

Ավագանու հարգելի՛ անդամներ, հարգելի՛ գործընկերներ, Երևանի ավագանու 7-րդ նստաշրջանի 1-ին նիստը հայտարարում եմ փակված:

Շնորհակալություն, ցտեսություն:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ

Կազմող՝
Կազմակերպական վարչություն